ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Վիճակագրության վարչություն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2008

Ներածություն **3**
Ու՞մ համար են նախատեսված Կանոնները 4
Կանոնների շրջանակները (առանցքը) 5
Կանոնների կառուցվածքը 5

1.Նշանակալիությունը **7**
1.1 *Վիճակագրությունն պետք է ուղղված լինի օգտագործողների կարիքների բավարարմանը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակությունը և տվյալներ տրամադրողների բեռը:* 7
1.2 Մոնիտորինգի պետք է ենթարկվի առկա վիճակագրության համապատասխանությունը օգտագործողների պահանջներին և բացահայտվի լրացումներ կատարելու անհրաժեշտությունը: 8
1.3 Վիճակագրության հավաքագրման, կազմման մեթոդների կամ արդյունքների մեջ կարևոր փոփոխություններ նախատեսելու դեպքում պետք է հաշվի առնվեն օգտագործողների տեսակետները: 9
1.4 Օգտագործողները պետք է տեղեկացվեն ԿԲ կողմից վիճակագրության կազմման գործընթացներում իրականացված փոփոխությունների և զարգացումների վերաբերյալ: 10

2. Արժանահավատությունը **11**
2.1 Վիճակագրությունը պետք է լինի անաչառ (օբյեկտիվ) 11
2.2 Վիճակագրության արժանահավատությունը պետք է ապահովվի վիճակագրության վարչության աշխատակիցների արհեստավարժության բարձր մակարդակի պահպանման և զարգացման խրախուսման միջոցով: 11
2.3 Վիճակագրության կազմման մեթոդները և փորձը (ընթացակարգերը) պետք է բաց լինեն հասարակության համար 12

3. Որակը **14**
3.1 Վիճակագրության կազմման մեթոդաբանությունը պետք է համահունչ լինի միջազգայնորեն ընդունված չափանիշներին, ուղեցույցերին կամ լավագույն փորձին: 14
3.2 Տվյալների աղբյուրը և վիճակագրական մեթոդները պետք է լինեն հավաստի և դրանց միջոցով ստացված վիճակագրական տեղեկատվությունը պետք է առավելագույնս արտահայտի իրականությունը: 14
3.3 Վիճակագրությունը պետք է լինի ժամանակին և համադրելի: 15
3.4 Տվյալների վերանայումները պետք է լինեն թափանցիկ և կանոնակարգված: 15

4.Մատչելիությունը (հասանելիությունը) **17**
4.1 Վիճակագրության հրապարակման գործընթացները պետք է լինեն բաց և նախապես հայտարարված: .. 17
4.2 Հրապարակված վիճակագրությունը պետք է հավասարապես մատչելի լինի բոլոր օգտագործողներին: .. 17

5.Գաղտնիություն **19**
5.1 Վիճակագրության վարչության պետը պատասխանատու է այնպիսի վերահսկողական միջոցառումների ապահովման համար, որոնք ուղղված են պաշտպանելու հաշվետու անձանց վերաբերող տվյալների գաղտնիությունը: 19
5.2 Հաշվետու անձանց պետք է հայտնի լինի իրենց կողմից տրամադրված տեղեկատվության օգտագործման նախատեսվող հիմնական ուղղությունները, ինչպես նաև այդ տեղեկատվության հասանելիության սահմանափակումները: 20
5.3 Վիճակագրության կազմման մեջ ներգրավված անձնակազմը պետք է ապահովի հաշվետու անձանց կողմից տրամադրված տեղեկատվության գաղտնիությունը՝ համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի և պետք է տեղյակ լինի բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության չթույլատրված հրապարակման դեպքում առկա տուգանքների վերաբերյալ: 20
5.4 Հաշվետու անձանց տվյալները ֆիզիկապես անվտանգ պետք է պահվեն: 21

6.Հաշվետու անձանց բեռը **22**
6.1 Տվյալներ տրամադրողների ծախսերը պետք է հասցվեն նվազագույնի՝ հաշվի առնելով կոնկրետ նպատակների իրագործման համար անհրաժեշտ վիճակագրական տվյալների անհրաժեշտությունը: 22
6.2 Տվյալներ տրամադրողների կարիքները պետք է դիտարկվեն որպես վիճակագրության կազմման գործընթացի անբաժանելի մաս: 23

Ներածություն

ՀՀ ԿԲ վիճակագրության կազմակերպման կանոնները (այսուհետ՝ Կանոններ) սահմանում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամավարկային և ֆինանսական վիճակագրության տվյալների հավաքագրման, կազմման և տարածման չափանիշները:

ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) կողմից դրամավարկային և ֆինանսական վիճակագրության հավաքագրումը և ներկայացումը իրականացվում է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» (հոդված 5) և «Բանկերի ու բանկային գործունեության մասին» (հոդված 55), «Վարկային կազմակերպությունների մասին» (հոդված 15) , «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» (հոդված 85, 96), «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» (հոդված 25), «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» (հոդված 15) ՀՀ օրենքների դրույթների ներքո, որոնց համաձայն ՀՀ ԿԲ-ն հավաքագրում է տեղեկատվություն, ինչն անհրաժեշտ է օրենքով սահմանված խնդիրներն իրականացնելու համար:

Սույն Կանոնների փիլիսոփայությունը լիովին համապատասխանում է ԿԲ թափանցիկության և արժանահավատության ապահովման սկզբունքներին, ՀՀ ԿԲ զարգացման տեսլականում առկա ռազմավարական զարգացման ուղղություններին: Այն նաև համահունչ է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովների կողմից ընդունված պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներին, ինչպես նաև Եվրոպական վիճակագրության նորմերի կոդեքսով սահմանված սկզբունքներին: Կանոնները այնպես են կառուցված, որպեսզի նպաստեն վիճակագրական գործընթացների կազմակերպման միջազգայնորեն ընդունված չափանիշների հաստատմանը, հնարավորինս մատչելի լինեն ընթերցողին և բարձրացնեն հասարակության վստահությունը ԿԲ վիճակագրության նկատմամբ: Կանոնները բացառապես վերաբերում են ԿԲ կողմից վիճակագրական նպատակով հավաքագրվող և ներկայացվող տեղեկատվությանը:

Հետագայում վիճակագրական որևէ ընթացակարգի փոփոխման դեպքում Կանոններում կիրականացվեն համապատասխան վերանայումներ, որոնց մասին տեղեկատվությունը կտեղադրվի ԿԲ ինտերնետային կայքում:

ԿԲ վիճակագրական ընթացակարգերի վերաբերյալ հարցերը կարող են հասցեագրվել ԿԲ Վիճակագրության վարչություն՝ հետևյալ կապի միջոցներով.

Հեռախոս. (374 10) 592562, 592563

Էլեկտրոնային փոստ. sd.mpd@cba.am

Ո՞Ւմ համար են նախատեսված Կանոնները

Սույն Կանոնները նախատեսված են հավասարապես վիճակագրություն օգտագործողների, տվյալներ տրամադրողների և վիճակագրություն կազմողների համար: Կանոնները սահմանում են վիճակագրական գործընթացների կազմակերպման այնպիսի չափանիշներ, որոնք օգտագործողները և լայն հասարակությունը ակնկալում են ստանալ, հավաստիացնում են, որ տվյալներ տրամադրողների նկատմամբ կցուցաբերվի համընդհանուր անաչառ մոտեցում, ինչպես նաև ուղենիշ են հանդիսանում վիճակագրության զարգացման և տարածման մեջ ներգրավված ԿԲ անձնակազմի համար:

Բանկի կողմից ներկայացվող վիճակագրությունը ստացվում է ՀՀ-ում գործող առևտրային բանկերից, ինչպես նաև այլ ֆիանսական կազմակերպություններից՝ վարկային կազմակերպություններից, ապահովագրական ընկերություններից, արժեթղթերի ներդրումային ընկերություններից, գրավատներից և այլ ֆինանսական կազմակերպություններից: Կանոնները ներկայացնում են ընթացակարգեր, որոնք հնարավորինս թեթևացնում են հաշվետու սուբյեկտների բեռը՝ հաշվի առնելով օգտագործողների պահանջները: Դրանք նաև ներկայացնում են վիճակագրական նպատակներով հաշվետու անձանց կողմից ներկայացվող առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության պաշտպանության հետ առնչվող հիմնահարցերը:

Ըստ էության, Կանոնները ուղեցույց են հանդիսանում վիճակագրություն կազմողների համար, որոնք ներկայացնում են վիճակագրական գործընթացների կազմակերպման լավագույն փորձը և հասանելի են տվյալներ տրամադրողների և օգտագործողների համար:

Սույն Կանոնները ներկայացնում են վիճակագրության ոլորտում անհրաժեշտ գործողությունների ամբողջությունը: Վերջինիս բովանդակությունը գրեթե լիովին բնութագրում է վիճակագրության կազմակերպման ներկայիս գործընթացները, սակայն որոշ դրույթներ դեռ կիրառման ընթացքի մեջ չեն և այդպիսով ցույց են տալիս հետագա աշխատանքների զարգացման ուղղությունները: Ակնկալվում է, որ սույն Կանոնների առկայությունը կամրապնդի (կբարձրացնի) լայն հասարակության վստահությունը այն տեղեկատվության նկատմամբ, որի վրա հիմնվում են դրամավարկային քաղաքականության և այլ տնտեսական քաղաքականության որոշումները:

Կանոնների շրջանակները (առանցքը)

Սույն Կանոնները հիմնականում ներառում են ԿԲ Վիճակագրության վարչության Դրամավարկային և ֆինանսական վիճակագրության բաժնի ու Հաշվետվությունների ընդունման և ամփոփման բաժնի (այսուհետ՝ Վիճակագրության վարչություն) վիճակագրական աշխատանքները: Վերջինս հիմնականում ընդգրկում է վիճակագրական նպատակով հավաքագրվող տվյալներին վերաբերող աշխատանքների կազմակերպման բոլոր մակարդակները, երբ տվյալների հավաքագրման հիմնական նպատակը համախմբված վիճակագրության կազմումն ու հրապարակումն է: Այն նաև ներառում է վերահսկողական նպատակով հավաքագրվող տվյալների մասով աշխատանքները:

Ի հավելումն նշվածի, Կանոնները կարգավորում են այն վիճակագրական աշխատանքները, որոնք ժամանակ առ ժամանակ կարող են իրականացվել ԿԲ այլ ստորաբաժանումների կողմից և, որոնք կնպաստեն հրապարակվող համախմբված վիճակագրության շրջանակների ընդլայնմանը: Այն դեպքերում, երբ Կանոնների շրջանակներում կամ դրանից դուրս գտնվող կոնկրետ վիճակագրական գործունեության կարգավիճակը հստակ չէ, ապա որոշման կայացումը թողնվում է Վիճակագրական տվյալների տարածման հանձնաժողովին:

Կանոնների կառուցվածքը

Կանոնները հիմնվում են 6 հիմնարար սկզբունքների վրա, որոնք արտացոլում են ԿԲ վիճակագրական գործընթացների և արդյունքների առանձնահատկությունները: Այս սկզբունքները իրենց մեջ ամփոփում են ԿԲ նպատակները վիճակագրական գործունեության կազմակերպման վեց ուղղություններում: Վերջինիս են վերաբերում վիճակագրական տեղեկատվության *նշանակալիությունը, արժանահավատությունը, որակը, մատչելիությունը, ստացված տեղեկատվության (տեղեկատվության աղբյուրների) գաղտնիությունը, տվյալներ տրամադրողների ծանրաբեռնվածությունը:*

Կանոնները անդրադառնում են վերը նշված ոլորտներից յուրաքանչյուրին առանձին-առանձին:

Կանոնների յուրաքանչյուր բաժին ունի հետևյալ կառուցվածքը. այն նախ ներկայացնում է հիմնական սկզբունքը, դրա ընդհանուր ամփոփ բնութագիրը: Այնուհետև տվյալ սկզբունքը մանրամասնեցվում է՝ նախ ենթասկզբունքների համախմբի, իսկ հետո յուրահատուկ օրինակների, որոնք ցույց են տալիս թե ինչպես են այդ սկզբունքները կիրառվում գործնականում:

Աղյուսակ 1: ՀՀ կենտրոնական բանկի վիճակագրության կազմակերպման հիմնական սկզբունքները

Հիմնական սկզբունքը	*ՀՀ կենտրոնական բանկի Կանոններ*
1. Նշանակալիությունը	Բանկի կողմից կազմված վիճակագրությունը պետք է արտացոլի ԿԲ, Կառավարության, գործարար հատվածի և լայն հասարակության կայացրած կարևոր որոշումները
2. Արժանահավատությունը	Վիճակագրությունը պետք է կազմվի՝ օգտագործելով օբյեկտիվ և թափանցիկ մեթոդներ
3. Որակը	Վիճակագրությունը պետք է լինի բարձր որակի և համապատասխանի դրված նպատակներին
4.Մատչելիությունը	Բանկի կողմից վիճակագրության հրապարակումը և մատչելիության ապահովումը պետք է լինի կանոնակարգված և թափանցիկ
5. Գաղտնիությունը	Պետք է ապահովվի անհատական վիճակագրական տվյալների գաղտնիությունը
6. Հաշվետու սուբյեկտների բեռը	Հաշվետու անձանց բեռը պետք է պահպանվի ընդունելի մակարդակի վրա՝ հաշվի առնելով օրենսդրական պահանջները և հաշվեկշռելով օգտագործողների պահանջները տվյալների մատակարարների նկատմամբ պահանջների հետ

1.Նշանակալիությունը

Վիճակագրությունը համարվում է արժեքավոր և օգտակար այն դեպքում, երբ այն օգնում է օգտագործողներին պատասխանել իրենց հետաքրքրող հարցերին: Սույն բաժնի նպատակն է երաշխավորել, որ ռեսուրսները ուղղված են այնպիսի տեղեկատվության կազմմանը (մշակմանը և ներկայացմանը), որը առավելագույնս օգտակար կլինի օգտագործողների համար: Պատասխանատվությունը դրվում է վիճակագրությունը կազմողների վրա՝ վստահեցնելու, որ օգտագործողների կարիքները հասկացվել են, վիճակագրական տվյալների բազայում առկա բացթողումները բացահայտված են և, որ ռեսուրսները չեն օգտագործվում այնպիսի տվյալներ ստանալու համար, որոնց կարիքը օգտագործողները այլևս չունեն:

1.1 ***Վիճակագրությունն պետք է ուղղված լինի օգտագործողների կարիքների բավարարմանը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակությունը և տվյալներ տրամադրողների բեռը:***

1.1.1 ԿԲ Վիճակագրության վարչության աշխատակիցները սերտորեն համագործակցում են ԿԲ ներսում հիմնական օգտագործողների, Ազգային վիճակագրության ծառայության, Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, որոշ միջազգային կազմակերպությունների և այլ օգտագործողների հետ:

1.1.2 ԿԲ-ում ստեղծված է տվյալների տարածման հանձնաժողով (ՀՀ ԿԲ նախագահի 2006թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1/1425Լ որոշում), որը նախագահում է վիճակագրության վարչության պետը, իսկ անդամները վիճակագրության վարչության և ԿԲ այլ ստորաբաժանումների աշխատակիցներն են, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ ներկայացուցիչը: Հանձնաժողովի հանդիպումները տեղի են ունենում ամսական կտրվածքով, որի ընթացքում քննարկվում են վիճակագրության կազմման, մշակման, տարածմանը վերաբերող հարցեր, հաշվի են առնվում այլ ստորաբաժանումների պահանջները և առաջարկությունները: Հանձնաժողովի որոշումները վերջում վավերացվում են ՀՀ ԿԲ նախագահի կողմից:

1.1.3 ՀՀ Ազգային վիճակագրության ծառայությունը (ԱՎԾ) սերտ փոխհարաբերությունների մեջ է ԿԲ Վիճակագրության վարչության հետ: ԿԲ և ԱՎԾ միջև փոխհարաբերությունները կանոնակարգվում են «ԿԲ և ԱՎԾ միջև տեղեկատվության փոխանակման» համաձայնագրով: ԱՎԾ գործունեության եռամյա ծրագիրը յուրաքանչյուր

տարի ԿԲ կողմից վերանայվում է: ՀՀ կենտրոնական բանկը անդամակցում է նաև Արտաքին հատվածի վիճակագրության կատարելագործման հարցերի հանձնաժողովին, որի անդամներն են հանդիսանում նաև ՀՀ ԱՎԾ և ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչները[1]:

1.1.4 Վիճակագրության վարչությունը փոխհարաբերությունների մեջ է նաև մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, տեղեկատվություն է տրամադրում նրանց և փոխադարձ հետաքրքրությունների շրջանակներում ակտիվ համագործակցում է վերջիններիս հետ: ԿԲ կողմից ԱՄՀ-ին և Համաշխարհային Բանկին տեղեկատվություն տրամադրվում է համաձայն ՀՀ ԿԲ խորհրդի 2006 թվականի հունիսի 6-ի թիվ 240 Ա որոշմամբ հաստատված կարգի: 2003թ նոյեմբերից ԿԲ անդամակցում է ԱՄՀ Տվյալների Տարածման Հատուկ Չափորոշիչին (ՏՏՀՉ) և դրա շրջանակներում տեղեկատվություն է տրամադրում ԱՄՀ-ին:

1.1.5 ԿԲ Վիճակագրության վարչությունը վիճակագրությունը կազմելիս հետևողական է նաև օգտագործողների և լայն հասարակության շահերը հաշվի առնելու հարցում՝ առաջարկելով տեխնիկական բնույթի սեմինարներ լրագրողների խմբերին (ԿԲ մամուլի ծառայության հետ համատեղ), հրապարակելով վարչության վերլուծական նյութերը: Օգտագործողներին առկա վիճակագրությունը հավասարապես հասանելի դարձնելու նպատակով ԿԲ առաջնայնություն է տալիս ինտերնետի միջոցով տվյալների տարածմանը:

1.2 Մոնիտորինգի պետք է ենթարկվի առկա վիճակագրության համապատասխանությունը օգտագործողների պահանջներին և բացահայտվի լրացումներ կատարելու անհրաժեշտությունը:

1.2.1 Վիճակագրության անձնակազմը պետք է ձգտի հասկանալ այն գործառույթների էությունը (ենթատեքստը), որոնց իրականացման համար օգտագործվելու է տրամադրվող վիճակագրական տեղեկատվությունը:

- Վիճակագրական (դրամավարկային) տվյալները պատրաստող անձնակազմը պետք է ներկա լինի բոլոր այն հանդիպումներին և նիստերին, որտեղ քննարկվում են

[1] «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության Արտաքին հատվածի վիճակագրության կատարելագործման հարցերի հանձնաժողովի մասին», ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի որոշում թիվ 11-Ա 18.05.2007թ.

վիճակագրությանը և դրամավարկային քաղաքականությանը վերաբերող հարցեր կամ դրանց վրա հիմնված վերլուծություններ:

- Վիճակագրության վարչությունը յուրաքանչյուր ամիս կազմակերպում է Վիճակագրական տվյալների տարածման հանձնաժողովի նիստեր, որոնց մասնակցում են ԿԲ ներսում օգտագործողները, ԱՎԾ ներկայացուցիչը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, առևտրային բանկերի ներկայացուցիչները:
- ԿԲ ինտերնետային էջում առկա է հարցաթերթիկ, որի միջոցով վիճակագրություն օգտագործողները կարող են արտահայտել իրենց դժգոհությունները և առաջարկությունները: Այնուհետև այս առաջարկությունները հաշվի են առնվում Վիճակագրության վարչության կողմից (www.cba.am - «Հրապարակումներ և Վիճակագրություն» բաժին):
- Առկա տեղեկատվությանը կից առկա է նաև այն պատրաստող բաժնի հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, որը հնարավորություն է ընձեռում վիճակագրություն օգտագործողներին ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանը:

1.3 Վիճակագրության հավաքագրման, կազմման մեթոդների կամ արդյունքների մեջ կարևոր փոփոխություններ նախատեսելու դեպքում պետք է հաշվի առնվեն օգտագործողների տեսակետները:

1.3.1 Վիճակագրության ներկայացման, փոփոխման կամ ընդհատման վերաբերյալ որոշումներում պետք է հաշվի առնվեն օգտագործողների, տվյալներ տրամադրողների և համապատասխան փորձագետների կարծիքները:

- Քննարկումները ընդհանուր առմամբ պետք է ներառեն այն օգտագործողների շրջանակը, ովքեր հետաքրքրված են տվյալ հարցում, իսկ քննարկումների խորությունը պետք է ածանցվի տվյալ խնդրի կարևորությունից:
- Այնուամենայնիվ, կարող են լինել դեպքեր, երբ պահանջվում է կազմակերպել ավելի պաշտոնական և ընդգրկուն քննարկումներ:
- Առանցքային օգտագործողների հետ ընթացիկ քննարկման գործընթացն առավել լայն, պաշտոնական և ընդգրկուն գործընթացի վերածելու որոշումը կայացնում է վիճակագրության վարչության պետը:

1.4 Օգտագործողները պետք է տեղեկացվեն ԿԲ կողմից վիճակագրության կազմման գործընթացներում իրականացված փոփոխությունների և զարգացումների վերաբերյալ:

1.4.1 ԿԲ ներսում օգտագործողները մշտապես հնարավորություն ունեն օգտվելու (հետևելու) հետազոտական աշխատանքներից և ապագա ռազմավարական խնդիրները բնութագրող փաստաթղթերից:

1.4.2 ԿԲ-ից դուրս օգտագործողները, նույնպես կարող են օգտվել այն բոլոր հետազոտական և մեթոդական նյութերից, որոնք ուղղված են բարձրացնելու վիճակագրական տվյալների օգտագործման արդյունավետությունը: Այդ նյութերը կներկայացվեն ինչպես օգտագործողների հետ հանդիպումների ժամանակ, այնպես էլ առկա կլինեն ԿԲ ինտերնետային կայքում:

2. Արժանահավատությունը

Վիճակագրությունը, որը չի արժանանում հասարակության վստահությանը, կթուլացնի դրա վրա հիմնված քաղաքականության ցանկացած որոշումների նկատմամբ վստահությունը: Սույն բաժինը ներկայացնում է այն հիմնական կանոնները, որոնք նախատեսված են նշված վստահությունը ձեռք բերելու համար: Հաջորդ բաժնի հետ համատեղ, այն սահմանում է գործընթացները, որոնք կնպաստեն, որպեսզի վիճակագրությունն առավելագույնս տեղեկացնի քաղաքականության որոշումների մասին, ազդի քաղաքականության որոշումների կայացման և հասարակության կողմից այդ որոշումների ընկալման վրա:

2.1 Վիճակագրությունը պետք է լինի անաչառ (օբյեկտիվ)

- Քաղաքականության փաստացի կամ ծրագրային ուղղությունները ներկայացնելիս (հրապարակելիս), եթե դրանցում օգտագործվում է կամ հղում է կատարվում վիճակագրական որոշ տվյալների, ապա համապատասխան վիճակագրությունը պետք է հրապարակվի քաղաքականության որոշումների (policy statement) հրապարակումից առանձին և նրանից ավելի շուտ կամ նրա հետ միաժամանակ:

2.2 Վիճակագրության արժանահավատությունը պետք է ապահովվի վիճակագրության վարչության աշխատակիցների արհեստավարժության բարձր մակարդակի պահպանման և զարգացման խրախուսման միջոցով:

2.2.1 Մասնագիտական գիտելիքները պետք է ընդլայնվեն համապատասխան վերապատրաստման դասընթացներին մասնակցության միջոցով:

- Ղեկավարությունը պետք է գնահատի վիճակագրության կազմակերպման գործընթացում ընդգրկված անձնակազմի ուսուցման և զարգացման կարիքները և ապահովի համապատասխան ուսուցողական հնարավորություններ:
- Ներքին ուսուցողական և զարգացման ծրագրերը նույնպես պետք է խրախուսվեն:

- Ղեկավարությունը հնարավորինս պետք է խրախուսի և աջակցի անձնակազմի այն անդամներին, ովքեր ձգտում են համապատասխան ոլորտներում ստանալ ակադեմիական և մասնագիտական որակավորում:

2.2.2 Վարչության յուրաքանչյուր աշխատակցի համար պետք է կազմվի աշխատանքային անհատական ծրագիր, և ելնելով դրանից պետք է որոշվեն նաև աշխատակցի զարգացման կոնկրետ ուղղությունները (ծրագրերը):

2.2.3 Անձնակազմը չպետք է օգտագործի վիճակագրության պատրաստման գործընթացում իր ներգրավվածության և, հետևաբար, տեղեկացվածության հանգամանքը անձնական շահերի նպատակով:

2.2.4 Ղեկավարությունը պետք է հետևողական լինի, որպեսզի սույն Կանոնների սկզբունքները և չափանիշները տարածվեն բոլոր աշխատակիցների վրա, ովքեր ներգրավված են վիճակագրության պատրաստման գործընթացներում:

- Վիճակագրության վարչության անձնակազմը իր գործունեության ընթացքում պետք է առաջնորդվի սույն Կանոնների դրույթներով:
- Բանկի ներսում վիճակագրություն օգտագործողները պետք է պարբերաբար հիշեցվեն սույն Կանոններով սահմանված ԿԲ հիմնական պարտավորությունների մասին, ինչպես նաև նրանց անհատական պատասխանատվության մասին:
- Վիճակագրության վարչությունից դուրս ԿԲ անձնակազմի կողմից վիճակագրական ցանկացած գործունեության (տվյալների հավաքագրում/կազմում) կազմակերպման համար սույն Կանոնները հանդես են գալիս որպես լավագույն ուղեցույց:

2.3 Վիճակագրության կազմման մեթոդները և փորձը (ընթացակարգերը) պետք է բաց լինեն հասարակության համար

2.3.1 Վիճակագրության կազմման համար օգտագործված մեթոդները պետք է հրապարակվեն կամ մատչելի լինեն պահանջի դեպքում:

- Հաշվետվական ձևերը պետք է մատչելի լինեն ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում՝ համապատասխան սահմանումների և հաշվետվության կազմման ուղեցույցերի հետ միասին (տես նաև 6.2 կետը ստորև):
- Հրապարակված վիճակագրական ցուցանիշները պետք է հստակորեն դասակարգվեն և սահմանվեն:

- Հրապարակված տվյալները պետք է հղումներ ունենան մեթոդոլոգիայի մատչելի աղբյուրներին:
- Մեթոդաբանությունում տեղ գտած հիմնական փոփոխությունները և դրանց ազդեցությունը արդյունքների վրա պետք է հրապարակվեն:
- Վիճակագրության կազմման մեթոդաբանությունը պետք է ներկայացվի հստակ և պարզ:

2.3.2 Բանկը պետք է օգտագործողների համար մատչելի դարձնի այն բոլոր նյութերը և աշխատանքային փաստաթղթերը, որոնք կնպաստեն բանկի կողմից հրապարակված վիճակագրության առավելագույնս ճիշտ մեկնաբանությանը՝հաշվի առնելով գաղտնիության առկա սահմանափակումները:

- Վիճակագրության անձնակազմը պետք է ձեռնարկի քայլեր, որպեսզի ընդլայնի և բարձրացնի հասարակության կողմից ԿԲ վիճակագրության և վիճակագրական խնդիրների ընկալման աստիճանը:
- Վիճակագրության վերաբերյալ օժանդակ նյութերը պետք է պարբերաբար հրապարակվեն ԿԲ ինտերնետային կայքում կամ ներկայացվեն վիճակագրություն օգտագործողների հետ հանդիպումների ժամանակ:
- Օգտագործողների կողմից վիճակագրական խնդիրների թերընկալման դեպքում, ԿԲ-ը հնարավորինս պետք է արձագանքի դրանք պարզաբանելու համար:
- Վիճակագրության անձնակազմը պետք է արձագանքի հասարակության կողմից վիճակագրության վերաբերյալ տեղեկատվության հայցումներին:

3. Որակը

Ընդհանուր առմամբ վիճակագրության որակը կախված է բոլոր այն դրույթներից, որոնք ներկայացված են սույն Կանոններում: Այնուամենայնիվ, գոյություն ունեն որոշակի կոնկրետ չափանիշներ, որոնք առաջնային նշանակություն ունեն որակի ապահովման համար: Մասնավորապես, այս բաժնում ներկայացված են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են վիճակագրության հաշվարկման համար ընտրված մեթոդների ընտրությունը, հաշվարկների հուսալիությունը (վստահելիությունը), և պիտանելիությունը:

3.1 Վիճակագրության կազմման մեթոդաբանությունը պետք է համահունչ լինի միջազգայնորեն ընդունված չափանիշներին, ուղեցույցերին կամ լավագույն փորձին:

3.1.1 Կազմված վիճակագրությունը պետք է համապատասխանի միջազգային չափանիշներին և դասակարգումներին÷

- Լայնորեն ընդունված վիճակագրական սահմանումները և դասակարգումները պետք է խրախուսվեն և օգտագործվեն բոլոր վիճակագրական ամփոփումներում և աղբյուրներում:

3.1.2 Վիճակագրության կազմման գործընթացները և մեթոդները պետք է նկարագրվեն փաստաթղթերում:

- Փաստաթղթավորման գործընթացը անընդհատ պետք է կատարելագործվի, իսկ ստեղծված փաստաթղթերը կհրապարակվեն կամ մատչելի կդառնան ըստ հայցման:
- Վիճակագրական տվյալների հաշվարկման գործընթացները և մեթոդները փաստաթղթերում պետք է նկարագրվեն հնարավորինս մանրամասն, որպեսզի հնարավորություն տան օգտագործողներին գնահատել, թե արդյոք այդ տվյալները կարող են ծառայել իրենց կողմից դրված նպատակին:

3.2 Տվյալների աղբյուրը և վիճակագրական մեթոդները պետք է լինեն հավաստի և դրանց միջոցով ստացված վիճակագրական տեղեկատվությունը պետք է առավելագույնս արտահայտի իրականությունը:

3.2.1 Հաշվետու սուբյեկտներից ստացվող մուտքային տվյալների որակը պետք է շարունակաբար ենթարկվի մոնիտորինգի:

- Հարկ եղած դեպքերում պետք է ստուգվի ստացվող մուտքային տվյալների ճշտությունը:
- Մուտքային տվյալների արժանահավատությունը պետք է ստուգվի ինչպես ավտոմատացված, այնպես էլ ձեռքով ստուգման մեխանիզմների միջոցով:
- Մուտքային տվյալների արժանահավատության վերաբերյալ ծագող հարցերը պետք է ուղղվեն հաշվետու սուբյեկտին՝ բացատրություն ստանալու նպատակով:

3.3 Վիճակագրությունը պետք է լինի ժամանակին և համադրելի:

3.3.1 Վիճակագրության կազմումից հետո այն պետք է հասանելի լինի հնարավորինս սեղմ ժամկետներում՝ պաշտոնական հրապարակումների, ԿԲ ինտերնետային կայքի միջոցով, կամ էլ ըստ հայցման:

3.3.2 Գործնականում հնարավոր դեպքերում հաշվարկված կոնկրետ վիճակագրական տվյալները պետք է տեղադրվեն համադրելի տվյալների համախմբում:

- Ժամանակային շարքերում տեղ գտած խզումների դեպքում տեղեկատվության շարունակականությունը պետք է պահպանվի շարքի ամբողջ երկայնքով, եթե վերջինս գործնականում հնարավոր է և արդյունավետ ծախսերի տեսանկյունից:

3.4 Տվյալների վերանայումները պետք է լինեն թափանցիկ և կանոնակարգված:

3.4.1 Տվյալների վերանայումները պետք է հնարավորինս շուտ արտացոլվեն հրապարակված ցուցանիշներում:

- Տվյալների վերանայումները, որոնք կատարվել են լրացուցիչ տեղեկատվության ստացման, մուտքային տվյալների ճշգրտման կամ մշակման արդյունքում, պետք է ներառվեն հրապարակվող հաշվետվություններում ամենաուշը հաջորդ հրապարակման ամսաթվին:
- Տվյալների վերանայումները, որոնք կատարվել են համակարգերի և մեթոդաբանության թարմացման արդյունքում, նույնպես պետք է ներառվեն հրապարակվող հաշվետվություններում հաջորդ հրապարակման ամսաթվին:

- Վիճակագրության հաշվարկման մեթոդի փոփոխության կամ օգտագործված նոր մուտքային տվյալների պատճառով վերանայված տեղեկատվությունը պետք է հրապարակվի օգտագործողների կողմից այս փոփոխություններին ծանոթանալուց հետո ամենասեղմ ժամկետներում:
- Մեթոդական վերանայումները պետք է տարածվեն նախորդ ժամանակահատվածների տվյալների նկատմամբ այնքան, որքան դա հնարավոր է պրակտիկորեն և տեղին է:
- Մեթոդական փոփոխությունների կամ տվյալների նոր աղբյուրների վերաբերյալ մանրամասները սովորաբար պետք է հրապարակվեն նախքան դրանց հիման վրա հաշվարկված արդյունքային ցուցանիշների հրապարակումը: Այնուամենայնիվ, մեթոդի փոփոխության կամ նոր աղբյուրների վերաբերյալ մանրամասները կարող են հրապարակվել նաև վերջնական վերանայված տեղեկատվության հետ միաժամանակ, եթե նախապես ծանուցվել է վերջիններիս հրապարակման մասին և տեղեկացվել է, որ դրանք կարող են տվյալների շարքերում խզումների կամ էական փոփոխությունների պատճառ հանդիսանալ:

3.4.2 Էական փոփոխությունները պետք է հստակորեն բնորոշվեն:

- Վիճակագրական հրապարակումներում պետք է մանրամասն ներկայացվեն միայն այն վերանայումները, որոնք համարվում են էական, և հետևաբար կարող են ազդել իրենց հետ կապված տվյալների մեկնաբանության վրա:

4.Մատչելիությունը (հասանելիությունը)

Կանոնների սույն բաժինը սահմանում է այն միջոցառումները, որոնք ուղղված են ԿԲ վիճակագրական հրապարակումների թափանցիկության ապահովմանը և վիճակագրությունը օգտագործողների կարիքների բավարարմանը:

Դրամավարկային վիճակագրությունը կազմող անձնակազմն ապահովում է վերլուծական և տեխնիկական աջակցություն ԿԲ այն տնտեսագետներին, ովքեր Դրամավարկային քաղաքականության կոմիտեի համար պատրաստում են ամփոփ տեղեկատվություն: Այս աջակցությունը, ընդհանուր առմամբ, ենթադրում է հիմնական վիճակագրական ցուցանիշների մատչելիության ապահովում: Բանկի վիճակագիրները համագործակցում են քաղաքականություն մշակող տնտեսագետների հետ և անհրաժեշտության դեպքում տրամադրում են լրացուցիչ տեղեկատվություն:

4.1 Վիճակագրության հրապարակման գործընթացները պետք է լինեն բաց և նախապես հայտարարված:

4.1.1 Վիճակագրության հրապարակման ամսաթվերը պետք է լինեն նախապես հայտարարված:

- Վիճակագրական հրապարակումների ժամանակացույցը և դրան առընչվող տեղեկատվությունը առկա է ՀՀ ԿԲ ինտերնետային էջում հետևյալ հասցեով՝ www.cba.am - «Հրապարակումներ և վիճակագրություն» բաժնում:
- Հրապարակման գործընթացների կամ ժամկետների փոփոխության դեպքում դրանց մասին նախապես պետք է տրվի տեղեկատվություն:

4.2 Հրապարակված վիճակագրությունը պետք է հավասարապես մատչելի լինի բոլոր օգտագործողներին:

4.2.1 Վիճակագրությունը պետք է մատչելի լինի բոլոր օգտագործողներին միաժամանակ:

- Վիճակագրության առաջնային հրապարակումը պետք է լինի ինտերնետի միջոցով, քանի որ այն հանդիսանում է օգտագործողների լայն շրջանակներին տվյալների միաժամանակյա ներկայացման ամենաարդյունավետ միջոց:

4.2.2 Հրապարակվող վիճակագրությունը պետք է հարմար լինի օգտագործման համար:

- Վիճակագրության հրապարակման տեղեկատվական միջոցները, ձևաչափերը, բովանդակությունը և կից աջակցող նյութերը պարբերաբար պետք է վերանայվեն, որպեսզի դրանք համապատասխանեցվեն օգտագործողների կարիքներին:
- Ամենածավալուն վիճակագրական տեղեկատվությունը և կից աջակցող նյութերը օգտագործողներին պետք է մատչելի լինեն ԿԲ ինտերնետային կայքի միջոցով:
- Բանկի կողմից վիճակագրական ուղեցույցերի և ձեռնարկների ձևաչափը պետք է պարբերաբար ենթարկվի վերանայումների, որպեսզի հնարավորինս հաշվի առնվեն օգտագործողների կարիքները:
- ԿԲ կողմից վիճակագրական տվյալներ են տրամադրվում նաև Ազգային Վիճակագրական ծառայությանը դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, ինչպես նաև վճարային հաշվեկշռի մասով: Տվյալների տրամադրման գործընթացը կանոնակարգվում է ԿԲ և ԱՎԾ միջև տվյալների փոխանակման համաձայնագրով:
- ԿԲ կողմից ուղղակիորեն տվյալներ են տրամադրվում նաև միջազգային կազմակերպություններին:

5.Գաղտնիություն

Բանկի կողմից պատրաստված վիճակագրության գերակշիռ մասը կազմվում է հաշվետու անձանցից ստացված տեղեկատվության հիման վրա, որը առևտրային տեսանկյունից պարունակում է գաղտնիություն: Կանոնների սույն բաժնում նկարագրվում է նմանատիպ տվյալներից օգտվելու նկատմամբ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև այդ տվյալների ֆիզիկական պահպանման հետ կապված միջոցառումները, որոնք ուղղված են կանխարգելելու գաղտնի տեղեկատվության չկանխամտածված հրապարակումը:

Տվյալների հավաքագրումը և ներկայացումը իրականացվում է «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» (հոդված 5) և «Բանկերի ու բանկային գործունեության մասին» (հոդված 55), «Վարկային կազմակերպությունների մասին» (հոդված 15) , «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» (հոդված 85, 96), «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» (հոդված 25), «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» (հոդված 15), ՀՀ օրենքների դրույթների ներքո, որոնց համաձայն ՀՀ ԿԲ-ն հավաքագրում է տեղեկատվություն, ինչն անհրաժեշտ է օրենքով սահմանված խնդրիներն իրականացնելու համար:

Կենտրոնական բանկը չի կարող տարածել բանկային գաղտնիք համարվող տեղեկատվություն («Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք, 1996թ., հոդված 9): Բանկային գաղտնիքի սահմանումը տրված է "Բանկային գաղտնիքի մասին" ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում: ՀՀ ԿԲ-ի պաշտոնատար անձինք և մյուս աշխատակիցները չեն կարող տարածել ծառայողական գաղտնիք համարվող տեղեկատվություն, բացառությամբ «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածում նշված դեպքերի: Նշված օրենքների էլեկտրոնային տարբերակները գտնվում են ՀՀ ԿԲ տնային էջում (www.cba.am - «Օրենսդրական դաշտ» բաժնի «Օրենքներ» ենթաբաժնում) :

5.1 Վիճակագրության վարչության պետը պատասխանատու է այնպիսի վերահսկողական միջոցառումների ապահովման համար, որոնք ուղղված են պաշտպանելու հաշվետու անձանց վերաբերող տվյալների գաղտնիությունը:

Այս միջոցառումները կանոնակարգվում են «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև անհատական իրավական ակտերով («ՀՀ ԿԲ-ում բանկային գաղտնիք պարունակող և ծառայողական օգտագործման համար նախատեսված փաստաթղթերի պատրաստման, հաշվառման, շրջանառության, պահպանման և ոչնչացման մասին»

հրահանգ, ՀՀ ԿԲ նախագահի որոշում N1/109Ա, 22.03.2004թ և «ՀՀ ԿԲ-ում բանկային գաղտնիք պարունակող, ծառայողական օգտագործման համար նախատեսված կամ դասակարգված այլ տեղեկատվություն պարունակող էլեկտրոնային փաստաթղթերի հետ աշխատելու մասին» կարգ, ՀՀ ԿԲ նախագահի որոշում N1/863Ա, 06.07.2007թ): Այս փաստաթղթերը նկարագրում են՝

- բանկային գաղտնիք հանդիսացող տվյալների հրապարակումը սահմանափակող գործընթացները
- այն հանգամանքները, որի պայմաններում այդպիսի տվյալները կարող են հասանելի լինել երրորդ անձանց

5.2 Հաշվետու անձանց պետք է հայտնի լինի իրենց կողմից տրամադրված տեղեկատվության օգտագործման նախատեսվող հիմնական ուղղությունները, ինչպես նաև այդ տեղեկատվության հասանելիության սահմանափակումները:

5.2.1 Հաշվետու անձինք պետք է տեղեկացվեն տեղեկատվության տրամադրման մասով իրենց իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ:

5.3 Վիճակագրության կազմման մեջ ներգրավված անձնակազմը պետք է ապահովի հաշվետու անձանց կողմից տրամադրված տեղեկատվության գաղտնիությունը՝ համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի և պետք է տեղյակ լինի բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության չթույլատրված հրապարակման դեպքում առկա տուգանքների վերաբերյալ:

5.3.1 Հրապարակված վիճակագրության շրջանակներում պետք է հնարավոր չլինի բացահայտել առանձին հաշվետու անձանց:

- Ցանկացած վիճակագրություն, որը ներառում է երեքից քիչ հաշվետու անձանց տվյալների աղբյուրներ, չպետք է ընդգրկվի հրապարակման մեջ, մինչև հաշվետու անձանց համաձայնության ստացումը:
- Հաշվետու անձանց տեղեկատվությունը հնարավոր է երբեմն ընդգրկվի հրապարակված վիճակագրությանը կից մեկնաբանություններում, սակայն միայն այն դեպքերում, երբ հաշվետու անձը տրամադրել է բացահայտ համաձայնություն կամ, երբ տեղեկատվությունը արդեն հասարակայնորեն հրապարակված է:

5.3.2 Վիճակագրության վարչության անձնակազմը պետք է երաշխավորի իր աշխատանքի ընթացքում հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիության պաշտպանությունը:

- Անձնակազմը հիշեցվում է իր այս պարտավորության մասին և ստորագրում այդ պարտավորության մասին տեղյակ լինելու վերաբերյալ հայտարարագիր:

5.4 Հաշվետու անձանց տվյալները ֆիզիկապես անվտանգ պետք է պահվեն:

5.4.1 Հաշվետու անձանց անհատական տվյալների հավաքագրման, պահպանման և օգտագործման հետ կապված միջոցառումները պետք է համապատասխանեն լավագույն փորձին:

- Տվյալների հասանելիությունը պետք է վերահսկվի գաղտնաբառով պաշտպանված օգտագործողների գրանցմամբ (user ID):
- Միայն լիազորված անձանց պետք է տրվի տվյալները դիտելու իրավունք:
- Միայն լիազորված անձանց պետք է թույլատրվի տվյալների բազայում տվյալներ մուտքագրել կամ փոփոխել և աուդիտը պետք է վերահսկի այդ փոփոխությունները:
- Մուտքի իրավունքը համակարգչին և ցանցին պետք է սահմանափակ լինի և այն պետք է տրամադրվի միայն լիազորված աշխատակիցներին:
- Այս միջոցառումները պետք է ենթակա լինեն պարբերական վերանայման:

5.4.2 ՀՀ Կենտրոնական բանկում ծառայողական և բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության հաշվառումը, շրջանառությունը, պահպանումը և ոչնչացումն իրականացվում է համապատասխան հրահանգով՝ համաձայն որի այդպիսի փաստաթղթերի շրջանառությունը կատարվում է միայն սահմանափակ թվով լիազոր անձանց միջև՝ խստիվ պահպանելով այդ հրահանգով սահմանված դրույթները: Վերը նշված տեղեկատվությունը պարունակող էլեկտրոնային փաստաթղթերի հետ աշխատանքը կանոնակարգվում է «ՀՀ Կենտրոնական բանկում բանկային գաղտնիք պարունակող, ծառայողական օգտագործման համար նախատեսված կամ դասակարգված այլ տեղեկատվություն պարունակող էլեկտրոնային փաստաթղթերի հետ աշխատելու մասին» կարգով, որտեղ հանգամանորեն սահմանվում են բոլոր հնարավոր անվտանգության միջոցառումներն այդպիսի փաստաթղթերի նկատմամբ, ներառյալ ֆիզիկական, տրամաբանական և ծածկագրային պաշտպանական միջոցառումները:

6.Հաշվետու անձանց բեռը

Կանոնների սույն բաժինը ներկայացնում է հաշվետու անձանց անհիմն և կիրառական տեսանկյունից ոչ շատ կարևոր տվյալների պահանջներից պաշտպանելու գործընթացները: Վիճակագրության վարչության անձնակազմը պատասխանատու է, որպեսզի գոյություն ունեցող, ինչպես նաև նոր տվյալների հավաքագրումները համահունչ լինեն թույլատրելի չափանիշներին, որոնք հիմնված են ծախս-եկամուտ սկզբունքի արդյունքների վրա:

6.1 Տվյալներ տրամադրողների ծախսերը պետք է հասցվեն նվազագույնի՝ հաշվի առնելով կոնկրետ նպատակների իրագործման համար անհրաժեշտ վիճակագրական տվյալների անհրաժեշտությունը:

6.1.1 Վիճակագրության վարչությունը պետք է հնարավորինս արդյունավետ օգտագործի տվյալների գոյություն ունեցող աղբյուրները:

- Նախքան նոր հաշվետվական ձև առաջարկելը կամ առկա ձևը վերանայելը, վիճակագրություն կազմողները պետք է մանրամասն քննարկեն, թե որքանով է հնարավոր անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալ արդեն իսկ առկա հաշվետվական ձևերից և տվյալների բազաներից:

6.1.2 Նոր և արդեն իսկ գոյություն ունեցող տվյալների հավաքագրման գործընթացները պետք է գնահատվեն՝ հիմնված ծախս-արդյունք վերլուծության արդյունքների վրա և պարբերաբար պետք է վերանայվեն:

- Նոր պարբերական տվյալների հավաքագրումները, ինչպես նաև գոյություն ունեցող հավաքագրումներում էական փոփոխությունները կամ դադարեցումները պետք է ենթակա լինեն ԿԲ խորհրդի հաստատմանը:
- Նոր վիճակագրական հաշվետվական ձևի ներդրումից կամ առկա ձևում հիմնական փոփոխությունների կատարումից հետո Վիճակագրության վարչությունը պետք է խուսափի երկու տարվա ընթացքում հաշվետվական ձևում էական փոփոխություններ կատարելուց:
- Առկա վիճակագրական հաշվետվական ձևերը պետք է վերանայվեն երկու տարին մեկ անգամ՝ օգտագործելով ծախս-արդյունք վերլուծության արդյունքները՝ հավաստիացնելու համար, որ հավաքագրված տվյալները դեռ պահանջված են և չեն կարող հավաքագրվել ծախսային տեսանկյունից առավել արդյունավետ եղանակով այլ աղբյուրներից:

6.1.3 Հաշվետվական ձևերը պետք է լինեն պարզ և տրամաբանական:

6.1.4 Ելնելով պահանջվող որակի վիճակագրության կազմման խնդրից՝ հաշվետվական ձևի աղյուսակային բաժինների քանակը պետք է հնարավորինս հասցվի նվազագույնի:

6.2 Տվյալներ տրամադրողների կարիքները պետք է դիտարկվեն որպես վիճակագրության կազմման գործընթացի անբաժանելի մաս:

6.2.1 Տվյալներ տրամադրողները պետք է տեղեկացվեն, թե ինչու են անհրաժեշտ այդ տվյալները:

6.2.2 Նոր տվյալների հավաքագրման կամ առկա հավաքագրումներում էական փոփոխությունների մշակման և իրագործման վերաբերյալ տվյալներ տրամադրողներին պետք է տրվի խորհրդատվություն:

- Ֆինանսական կազմակերպությունների համապատասխան ասոցիացիայի ղեկավարը պետք է տեղյակ պահվի բոլոր փաստացի և հնարավոր առաջարկների մասին, որոնք վերաբերում են հավաքագրվող տեղեկատվության փոփոխություններին:

6.2.3 Տվյալներ տրամադրողներին պետք է հասանելի լինեն մի շարք տեխնիկական աջակցման ծառայություններ:

- Մանրամասն սահմանումները և հաշվետվությունների կազմման ուղեցույցը պետք է մատչելի լինեն բոլոր հաշվետու անձանց համար և թարմացվեն ըստ անհրաժեշտության:
- Հաշվետվությունների կազմման բոլոր ուղեցույցները հասարակայնորեն պետք է մատչելի լինեն ԿԲ ինտերնետային կայքում:
- Հաշվետու անձինք պետք է ունենան համապատասխան հեռախոսահամարներ՝ հաշվետվությունների վերաբերյալ ծագած հարցերի պարզաբանման համար:
- Վիճակագրության վարչությունը հաշվետվությունների և նոր տվյալների պահանջների վերաբերյալ պետք է պարբերաբար անցկացնի սեմինարներ (քննարկումներ)՝ հաշվետու անձանց հաշվետվությունների կազմման գծով պատասխանատու անձնակազմի համար: